WASHINGTON ՆԱՀԱՆԳ
DEPARTMENT OF SOCIAL AND HEALTH SERVICES
(ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ)

Հաճախորդի համարը՝

Հարգելի _____,

Մենք խորհուրդ ենք տալիս դիմել կից ցանկում նշված գործակալություններից մեկին՝ որոշելու, թե արդյոք կարող եք դառնալ քաղաքացի:

Հինգ (5) տարի որպես օրինական մշտական բնակիչ լինելուց հետո, հնարավոր է, որ կարողանաք դիմել ԱՄՆ քաղաքացիություն ստանալու համար: Այս տեղեկատվական թերթիկը կօգնի Ձեզ հասկանալ, թե արդյոք քաղաքացի դառնալը լավագույն որոշումն է Ձեզ համար:

Ձեզանից չի պահանջվում քաղաքացի դառնալ, բայց քաղաքացի դառնալու դեպքում Դուք կկարողանաք.

- Մասնակցել քվեարկությանը
- Դիմել դաշնային նպաստների համար
- Շարունակել ստանալ Ապահովագրական օժանդակ եկամուտ (SSI) 7 տարի հետո

Այս գործակալության կողմից մատուցվող ծառայությունները Ձեզ համար անվճար են: Նրանք կարող են.

- Օգնել Ձեզ հասկանալ, թե արդյոք քաղաքացի դառնալը լավագույն որոշումն է Ձեզ համար
- Օգնել Ձեզ պատրաստվել քաղաքացիության թեստին
- Պահանջներին համապատասխանելու դեպքում օգնել Ձեզ դիմել հաշմանդամության նպաստների համար, որոնք Ձեզ ազատում են քննություն հանձնելու անհրաժեշտությունից
- Շատ դեպքերում Ձեզ կօգնեն վճարել դիմումների համար սահմանված վճարները

Առկա գործակալությունների ցանկը կցված է այս նամակին: Խնդրում ենք կապվել գործակալություններից մեկի հետ և նշանակել հանդիպում՝ նրանց հետ քաղաքացիություն ստանալու գործընթացը քննարկելու համար:

Խնդրում ենք հանդիպման գնալիս այս նամակը վերցնել Ձեզ հետ: Գործակալությունը կպահպանի պատճենը և կտեղեկացնի Ձեր սոցիալական աշխատողին, թե արդյոք կարող եք սկսել դիմումի գործընթացը, ունեք լուծման ենթակա հարցեր, կամ որոշել եք դեռևս չդիմել քաղաքացիություն ստանալու համար և ինչու:

Հարգանքով,

Հեռախոսահամար՝